№ 8 (12)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2021

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

8 (12)

ԵՐԵՎԱՆ 2021
ЕРЕВАН 2021
YEREVAN 2021

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №8 (12). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2021. – 242 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

ГОСТЕВАЯ СТРАНИЦА

ФОРМЫ И СРЕДСТВА ЭФФЕКТИВНОСТИ ПРОЦЕССА СОЦИАЛИЗАЦИИ СТУДЕНТОВ НА ФАКУЛЬТЕТЕ ХУДОЖЕСТВЕННОГО ОБРАЗОВАНИЯ ПЕДАГОГИЧЕСКОГО ВУЗА

Армен Самвелович Аветисян
avet1syan.armen@inbox.ru

Кафедра истории, теории искусства и культурологии,
факультет художественного образования,
Армянский государственный педагогический
университет имени Хачатура Абовяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье рассматривается роль педагогического вуза как социального института в эффективной реализации процесса социализации студентов.

Обосновано, что адаптация и эффективная социализация студентов в социокультурной среде факультета художественного воспитания университета обусловлена целевым систематическим использованием различных форм и средств учебной и внеучебной деятельности.

Представлена концепция «профессиональной социализации студентов» на факультете художественного образования, определенная автором, а также пути и средства эффективной реализации процесса социализации студентов факультета художественного образования педагогического вуза.

Ключевые слова: университет, студент, социализация, средства социализации, культурные ценности, профессио-

нальные компетенции, социокультурная среда, субъекты управления, социальные регуляторы.

ՀՀ-ում ընթացող սոցիա-տնտեսական, քաղաքական տեղաշարժները պահանջում են բուհերում ուսանողների սոցիալականացման գործընթացի արդյուավետության նոր միջոցների որոնում, սոցիալական նորմերի, բարոյական, գեղագիտական և ընդհանրապես մշակութային արժեքների փոխանցման գործընթացի վերաիմաստավորում:

Անձի սոցիալականացման հիմնախնդրի սոցիոլոգիական, հոգեբանամանկավարժական ժամանակակից հայեցակարգերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդը ձևավորվում է սոցիալական միջավայրում, որտեղ հասունանում է սոցիալապես, ձեռք է բերում սոցիալական փորձ, հարմարվում հասարակական կապերին ու սոցիալական դերերին:

Ն.Ի. Շևանդրինի կարծիքով. «Սոցիալականացումը մարդդու կողմից հասարակական կենսափորձի յուրացման գործընթաց է: … Սոցիալականացման արդյունքում մարդը յուրացնում է վարքի կարծրատիպեր, սոցիալական այն միջավայրի նորմերն ու արժեքային պատկերացումները, որում նա ապրում ու գործում է: Սոցիալականացումը հասարակության մեջ անձի հարմարման և զարգացման գործընթաց է» [7: 158]:

Անձի սոցիալականացման գործընթացի վրա ազդում են մի շարք ուղղակի և անուղղակի գործոններ: Ա.Վ. Մուդրիկը առանձնացնում է անձի սոցիալականացման վրա ազդող գործոնների չորս խումբ.

1. Մեգագործոններ՝ տիեզերքը, երկիր մոլորակը, աշխարհը:

2. Մակրոգործոններ՝ երկիրը, էթնոսը, հասարակությունը, պետությունը, որոնք ազդում են որոշակի տարածքում ապրող մարդկանց վրա:

3. Մեզոգործոններ՝ զանգվածային հաղորդակցման և լրատվական միջոցները՝ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ, ռադիո, հեռուստատեսություն, մամուլ կինո և այլն <այս կամ այն մշակույթին պատկանելիություն:

4. Միկրոգործոններ՝ մարդկանց վրա անմիջականորեն ներգործող միջոցները՝ ընտանիքի անդամները, հասակակիցները, միկրոսոցիումը, մերձավոր և հեռավոր ազգականները, հարևանությունը, ուսումնադաստիարակչական, ինչպես նաև պետական-հասարակական, կրոնական և մարզամշակութային կազմակերպությունները [6]:

Մանկավարժական բուհը, լինելով սոցիալական ինստիտուտ, անմիջականորեն ազդում է ուսանողների սոցիալականացման գործընթացի վրա: Այն կոչված է ոչ միայն ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների զարգացմանը, այլև նրանց հոգեկերտվածքի, արժեհամակարգի, սոցիալական ու քաղաքացիական դիրքորոշումների ձևավորմանը, սոցիալական տարբեր դերերի իրականացմանը, ինչպես նաև նախապատրաստելու նրանց հասարակության առաջընթացի ապահովմանն ու ղեկավարմանը:

Այս տեսանկյունից մանկավարժական բուհի կառավարման սուբյեկտների առջև ծառացած են մշակութային և ռազմավարական բնույթի մի շարք խնդիրներ.

- մասնագիտական գիտելիքներին և կոմպետանցիաներին տիրապետող որակյալ մասնագետների պատրաստում,
- սոցիալ-մշակութային փորձի, ավանդույթների և արժեքների փոխանցում, միջմշակութային փոխգործակցության շրջանակների ակտիվացում ու ընդլայնում՝ հավատարիմ մնալով ազգային մտածողությանն ու հոգևոր-բարոյական նկարագրին, գեղագիտական, կրթամշակութային արժեքներին,
- արժեքանորմատիվային սոցիալական կարգավորիչների փոփոխությունների կառավարում,
- անձնային և հասարակական շահերի համարժեքության համահավասարակշռության պահպանում՝ բուհի կրթամշակութային միջավայրին ուսանողների սահուն համարումն ապահովելու նպատակով,

- ուսանողների սոցիալականացման գործընթացի արդյունավետ կազմակերպում, աշխատաշուկայի արդի պահանջները բավարարելու համար:

Մանկավարժական բուհի ուսանողների սոցիալականացումը Վ.Ա. Բոչարովան բնութագրում է որպես նրանց կողմից սոցիալական փորձի յուրացում սոցիալական միջավայրում, սոցիալական կապերի համակարգում ներգրավման ուղիով: Միաժամանակ, նա նշում է, որ սոցիալականացումը անհատի կողմից սոցիալական կապերի վերարտադրման գործընթաց է մասնագիտական գործունեության դրդապատճառների դրսևորման միջոցով [1]:

Ի.Ս. Կոնի կարծիքով անձի համար սոցիալականացման գործընթացը ենթարկվում է ոչ միայն սոցիալական, այլև հոգեբանական օրինաչափություններին [3]: Ընդորում, նա միանգամայն իրավացիորեն նշում է, որ. «Սոցիալականացման գործընթացում անձը ոչ միայն հարմարվում է միջավայրին և յուրացնում սոցիալական դերեր, նորմեր ու կանոններ, այն ձեռք է բերում այդ միջավայրում ինչ-որ բան փոխելու, շրջակա աշխարհում իրեն վերակերտելու կարողություններ» [4: 37]:

Անառարկելի է, որ բուհի ուսանողների սոցիալականացման գործընթացի կարևոր բաղադրիչներից մեկը մասնագիտական սոցիալականացումն է, որն, առաջին հերթին, ենթադրում է նրանց ինտեգրում և ակտիվ փոխազդեցություն բուհի սոցիալ-մշակութային միջավայրում, մասնագիտական փորձի, արժեքների և նորմերի յուրացում:

Ըստ Է.Ֆ. Զեերի՝ մասնագիտական սոցիալականացումը դրսևորվում է. «մասնագիտական մտածողության, սոցիալական վարքի և մասնագիտական նույնականացման ձևավորմամբ» [2]:

Մեր կարծիքով բուհի գեղարվեստական կրթության ֆակուլտետում ուսանողների մասնագիտական սոցիալականացումը գործընթաց է, որն իրականանում է բուհի սոցիալ-մշակութային, կրթակենսական միջավայրին ուսանողների հարմարմամբ, մասնագիտական փորձի, գիտելիքների

և սոցիալական տեսանկյունից նշանակալի հմտությունների յուրացմամբ և հոգևոր-բարոյական կատարելագործմամբ:

Ըստ Վ.Վ. Լագերևի՝ բարձրագույն կրթական հաստատությունում ուսանողների հարմարումը ուսումնական գործընթացին իրենից ներկայացնում է անձի կեսագործունեության ինտենսիվ, զարգացող, բազմակողմանի և համալիր գործընթաց, որի ընթացքում ուսանողը, համապատասխան հարմարման ռեակցիաների հիման վրա մշակում է բավարարման կայուն հմտություններ՝ ելնելով այն պահանջներից, որոնք ներկայացվում են նրան բարձրագույն դպրոցի ուսուցման ու դաստիարակության ընթացքում» [5]:

Բուհի գեղարվեստական կրթության ֆակուլտետի սոցիալ-մշակութային միջավայրում ուսանողների հարմարումը և արդյունավետ սոցիալականացումը պայմանավորված է ուսումնական և արտաուսումնական գործունեության տարբեր ձևերի ու միջոցների նպատակաուղղված կիրառմամբ:

Մենք առանձնացրել ենք գեղարվեստական կրթության ֆակուլտետի սոցիալ-մշակութային միջավայրում ուսանողների հարմարման և արդյունավետ սոցիալականացման հետևյալ ձևերն ու միջոցները.

Ձևերը՝

- ուսումնական դասախոսությունները,
- ուսումնահետազոտական անհատական և կորպորատիվ նախագծերը,
- սյուժետադերային խաղերը,
- պլեներային և մասնագիտական պրակտիկաները,
- ստեղծագործական ցուցահանդեսները, մասնակցությունը տարբեր մրցույթների և այլն,
- ուսանողների արտաուսումնական հետաքրքքիր գործունեության և ազատ ժամանակի կազմակերպումը (մասնակցություն բուհի կառավարման գործընթացին, մասսայական մշակութային, սպոր-

տային միջոցառումների, ակտիվ հանգստի կազմակերպում, մասնագիտական փորձի փոխանակում, ակումբների, ընկերությունների ձևավորում):

Միջոցները՝

- համապատասխան կրթամշակութային հարմարավետ միջավայրը,
- ուսումնական գործընթացի կազմակերպումը ժամանակակից տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների կազմակերպմամբ,
- սոցիալականացման գործընթացի սոցիալ-մանկավարժական աջակցումը,
- ուսանողների սոցիալական և ակադեմիական հարմարմանը նպաստող առաջադրանքները,
- ուսանողների ինքնագիտակցման, ինքնաարդիականացման, ինքնազարգացման, համագործակցության կարողությունների զարգացման տեխնոլոգիաների կիրառումը,
- լսարանների գեղագիտական ձևավորումը և արդիականացումը,
- ֆակուլտետում բարձր հոգևոր-բարոյական կլիմայի ստեղծումը,
- ֆակուլտետի ներքին ինֆրաստրուտուրայի և արտաքին տարածքի մշտական բարեկարգումը,
- բուհի և սոցիումի համագործակցության կազմակերպումը,
- ուսանողների ինքնակառավարման մարմինների գործունեության ակտիվացումը:

Իհարկե՛, մենք չենք կարծում, որ պետք է սահմանափակվել գեղարվեստական կրթության ֆակուլտետի սոցիալ-մշակութային միջավայրում ուսանողների հարմարման և արդյունավետ սոցիալականացման մեր կողմից վերը նշված ձևերով ու միջոցներով:

Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ նշվածների մեջ գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների արդյունավետ սոցիալականացման համար հատկապես էական նշանակություն ունեն պլեներային և մասնագիտական պրակտիկաները, ուսանողների հաղոր-

դակցումը արտերկրյա բուհերի համապատասխան ֆակուլտետների ուսանողների հետ, նրանց հետ սոցիալական և մասնագիտական փորձի փոխանակումը, լսարանների գեղագիտական ձևավորումն ու արդիականացումը, ուսանողների ազատ ժամանակի կազմակերպումը, ուսումնական գործընթացի կազմակերպումը ժամանակակից տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների կազմակերպմամբ, ինչը որ հաջողությամբ իրականացվում է Խ. Աբովյանի անվան ՀՊՆՀ-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետում ի շնորհիվ բուհի և ֆակուլտետի կառավարման սուբյեկտների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի:

ЛИТЕРАТУРА

1. *Бочарова В.Г.* Предмет и функции социальной педагогики / Авт. кол.: чл.-корреспонденты РАО В.Г. Бочарова, С.И. Григорьев, к.п.н. М.П. Гурьянова и др.; Под. общ. ред. акад. Г.Н. Филонова; Рос. акад. образования. Ин-т педагогики социал. работы, Тюм. гос. ун-т. – Тюмень: Изд-во Тюм. гос. ун-та, 1998. – 128 с.
2. *Зеер Э.Ф.* Личностно-ориентированное профессиональное образование // Педагогика, 2002. – №3. – СС. 16–21.
3. *Кон И.С.* Социологическая психология: Избр. психол. тр. – М.: Моск. психол.-социал. ун-т; – Воронеж: МОДЭК, 1999. – СС. 60–124.
4. *Кон И.С.* НТР и проблемы социализации молодежи. – М.: Знание, 1987. – 63, [1] с.
5. *Лагерев В.В.* Адаптация студентов к условиям обучения в техническом вузе и особенности организации учебно-воспитательного процесса с первокурсниками. – Москва, 1991. – 48 с.
6. *Мудрик А.В.* Социализация и воспитание. – М.: Изд. фирма «Сентябрь», 1997. – 95, [1] с.
7. *Шевандрин Н.И.* Социальная психология в образовании. – М.: Владос, 1995. – 198 с.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՒՀԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ա.Ս. Ավետիսյան

avet1syan.armen@inbox.ru

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ,
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկված են մանկավարժական բուհի, որպես սոցիալական ինստիտուտի դերը ուսանողների սոցիալականացման գործընթացի արդյունավետ իրականացման գործում:
Հիմնավորված է, որ բուհի գեղարվեստական կրթության ֆակուլտետի սոցիալ-մշակութային միջավայրում ուսանողների հարմարումը և արդյունավետ սոցիալականացումը պայմանավորված է ուսումնական և արտաուսումնական գործունեության տարբեր ձևերի ու միջոցների նպատակաուղղված համակարգային կիրառմամբ:
Ներկայացված են հեղինակի կողմից սահմանված բուհի գեղարվեստական կրթության ֆակուլտետում «ուսանողների մասնագիտական սոցիալականացում» հասկացությունը, ինչպես նաև ռհետազոտության արդյունքում առանձնացված մանկավարժական բուհի գեղարվեստական կրթության ֆակուլտետում ուսանողների սոցիալականացման գործընթացի արդյունավետիրականացման ձևերն ու միջոցները:

Բանալի բառեր՝ բուհ, ուսանող, սոցիալականացում, սոցիալականացման միջոցներ, մշակութային արժեքներ, մասնագիտական կոմպետենցիաներ, սոցիալ-մշակութային միջավայր, կառավարման սուբյեկտներ, սոցիալական կարգավորիչներ:

THE WAYS AND MEANS OF THE EFFECTIVENESS OF THE STUDENTS' SOCIALIZATION PROCESS AT THE FACULTY OF ART EDUCATION OF THE PEDAGOGICAL UNIVERSITY

A. Avetisyan

avet1syan.armen@inbox.ru

Department of History, Theory of Art and Cultural Studies,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article discusses the role of the Pedagogical University as a social institution in the effective implementation of the student socialization process.

It is substantiated that the adaptation and effective socialization of students in the socio-cultural environment of the Faculty of Art Education of the University is conditioned by the targeted systematic use of different forms and means of educational and extracurricular activities.

The concept of «professional socialization of students» is presented by the author in the Faculty of Art Education, as well as the ways and means of effective implementation of the process of socialization of students in the Faculty of Art Education of the Pedagogical University are defined.

Keywords: university, student, socialization, means of socialization, cultural values, professional competencies, socio-cultural environment, governing entities, social regulators.

Информация о статье:
статья поступила в редакцию 18 октября 2021 г.,
подписана к печати в номер 8 (12) / 2021 – 29.11.2021 г.